ԳԱՂՏՆԱՁԵՐԾՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 դեկտեմբերի 2020 թվականի N 1918-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5-Ի N 1782-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղվածք

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի նոյեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման մեջ՝ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 1782-Ն որոշմամբ Ազգային անվտանգության ծառայության Պետական պահպանության ծառայությանը հատկացված ընդամենը 720,000.0 ԱՄՆ-ի դոլար գումարը 2020 թվականի նոյեմբերի 6-ին կանխիկացվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից 1 ԱՄՆ-ի դոլարը 498.8 դրամ փոխարժեքով (ընդամենը՝ 359,136.0 հազ. դրամին համարժեք).

2) Ազգային անվտանգության ծառայության Պետական պահպանության ծառայության կողմից 2020 թվականի նոյեմբերի 25-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջոցով գանձապետական 900011004497 հաշվեհամարին է

վերադարձվել 720,000.0 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ գումար՝ 1 ԱՄՆ-ի դոլարը 507.2 դրամ փոխարժեքով (ընդամենը՝ 365,184.0 հազ. դրամ).

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նկարագրված փոխանակման գործարքների արդյունքում առաջացած 6,048.0 հազ. դրամ դրական տարբերությունը համարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ